
	Հաշվապահական հաշվառման վարման կարգ	Կոդ 01.02.3	Խմբագրություն՝ 1.1
		Հաստատված է Բանկի Խորհրդի 08.09.2015թ. որոշմամբ	

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	2
ԳԼՈՒԽ 2. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ.....	2
ԳԼՈՒԽ 3. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՇՎԱՅԻՆ ՊԼԱՆԸ	4
ԳԼՈՒԽ 4. ՀԱՐԿԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ	11
ԳԼՈՒԽ 5. ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ.....	11
ԳԼՈՒԽ 6. ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԸ	12
ԳԼՈՒԽ 7. ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	12

	Հաշվապահական հաշվառման վարման կարգ	Կոդ 01.02.3	Խմբագրություն՝ 1.1
		Հաստատված է Բանկի Խորհրդի 08.09.2015թ. որոշմամբ	

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 <Յունիբանկ> բաց բաժնետիրական ընկերության Հաշվապահական հաշվառման վարման կարգով սահմանվում է <Յունիբանկ> ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) հաշվապահական հաշվառման վարման հիմնական դրույթները, խնդիրները, հաշվային պլանը, դրույթներ հարկերի հաշվառման վերաբերյալ, ակտիվների և պարտավորությունների գույքագրումը, աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հաշվարկը, հաշվեկշռի և ֆինանսական հաշվետվությունների կազմման կարգը:

1.2 Բանկը հաշվապահական հաշվառումը վարում է ՀՀ օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին համապատասխան:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

2.1 Հաշվապահական հաշվառումը Բանկի ակտիվների, սեփական կապիտալի, պարտավորությունների վիճակի ու շարժի վերաբերյալ դրամական արտահայտությամբ տեղեկատվության հավաքագրման, գրանցման և ընդհանրացման համակարգն է՝ տնտեսական գործառնությունների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառման միջոցով:

2.2 Հաշվապահական հաշվառման հիմնական խնդիրներն են՝


- տնտեսական գործառնությունների և Բանկի գործունեության արդյունքների վերաբերյալ ամբողջական և արժանահավատ տեղեկատվության ձևավորումը,
- գույքի առկայության, շարժի, նյութական, աշխատանքային և ֆինանսական միջոցների (ռեսուրսների) օգտագործման նկատմամբ հսկողության ապահովումը,
- ֆինանսական գործունեության մեջ առկա բացասական երևույթների մասին ժամանակին զգուշացումը:

2.3 Բանկում Հաշվապահական հաշվառումը վարվում է՝

- ՀՀ դրամով, արտարժույթով ներկայացված տարրերը պետք է վերածվեն դրամի՝ հաշվետվության օրվա ՀՀ ԿԲ սահմանած օրվա միջին փոխարժեքներով,
- Կրկնակի գրանցման եղանակով՝ հաշվային պլանին համապատասխան,
- Անընդհատ՝ գրանցման օրվանից մինչև գործունեության դադարումը,
- հետետողական՝ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը մի հաշվետու ժամանակաշրջանից մյուսը չպետք է փոփոխվի, բացառությամբ, եթե էական փոփոխություններ են տեղի ունեցել Բանկի գործառնությունների բնույթում, կամ հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխության միջոցով տրվում է առավել էական տեղեկատվություն, կամ հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի մեջ տեղի են ունեցել փոփոխություններ,

• հաշվեգրման եղանակով՝ տնտեսական գործառնությունների եւ դեպքերի արդյունքները (ակտիվները, սեփական կապիտալը, պարտավորությունները, եկամուտները եւ ծախսերը) ճանաչվում են հաշվապահական հաշվառման մեջ գրանցվում են այն ժամանակ, երբ դրանք տեղի են ունեցել, անկախ դրանց հետ կապված դրամական միջոցների վճարման կամ ստացման ժամկետից, եւ արտացոլվում են այն ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են.

• հասկանալի՝ ֆինանսական հաշվետվություններում պարունակող տեղեկատվությունը պետք է հասկանալի լինի օգտագործողներին, ովքեր ունեն համապատասխան գիտելիքներ (տնտեսական գործունեության եւ հաշվապահական հաշվառման բնագավառներում).

	Հաշվապահական հաշվառման վարման կարգ	Կոդ 01.02.3	Խմբագրություն` 1.1
		Հաստատված է Բանկի Խորհրդի 08.09.2015թ. որոշմամբ	

- էական՝ տեղեկատվությունը էական է, եթե նրա չբացահայտումն ազդում է ֆինանսական հաշվետվություններ օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա.

- միասնական՝ հաշվապահական հաշվառման բնույթով եւ գործառույթներով (ֆունկցիաներով) նման հաշիվները ֆինանսական հաշվետվությունների մեջ միավորվում են, եթե դրանց առանձին ներկայացումը չի պարունակում էական տեղեկատվություն.

- արժանահավատ՝ ֆինանսական հաշվետվությունները արժանահավատ են, եթե բավարարում են հետեւյալ պահանջները՝

- ձեւի նկատմամբ բովանդակության գերակայությունը՝ տնտեսական գործունեության արդյունքները հաշվապահական հաշվառման մեջ եւ ֆինանսական հաշվետվություններում հաշվառվում եւ ներկայացվում են՝ ելնելով դրանց տնտեսական բովանդակությունից եւ տնտեսավարման պայմաններից եւ ոչ թե միայն դրանց իրավական ձեւից,

- չեզոքությունը՝ ֆինանսական հաշվետվությունները ուղղված են օգտագործողների առանձին խմբի շահերի բավարարմանը եւ զերծ են կանխակալ արդյունք ստանալու նպատակով տեղեկատվության ընտրովի ներկայացումից,

- հաշվենկատությունը՝ բավարար չափի զգուշության պահպանումն է, այնպես, որ ակտիվները եւ եկամուտները գերազնահատված չլինեն, իսկ պարտավորությունները եւ ծախսերը՝ թերազնահատված, միեւնույն ժամանակ թույլ չտալով ակտիվների եւ եկամուտների միտումնավոր թերազնահատում, պարտավորությունների եւ ծախսերի միտումնավոր գերազնահատում,

- ամբողջականությունը՝ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկատվությունը ամբողջական է՝ էականության եւ արժեքի սահմաններում.

- համադրելիությունը՝ Բանկի տարբեր ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաեւ Բանկի և այլ կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները պետք է լինեն համադրելի

- հաշվանցումը՝ ակտիվների, սեփական կապիտալի եւ պարտավորությունների, եկամուտների եւ ծախսերի հոդվածների միջեւ հաշվանցում չի թույլատրվում, բացառությամբ հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերով նախատեսված դեպքերի.

- սահմանազատումը՝ Բանկի ակտիվները եւ պարտավորություններն առանձնացված են նրա հիմնադիրների, մասնակիցների եւ այլ կազմակերպությունների ակտիվներից եւ պարտավորություններից:


2.4 Անալիտիկ և սինթետիկ հաշվառման տվյալները պետք է համապատասխանեն միմյանց:

2.5 Բոլոր տնտեսական գործառնությունների արդյունքները հաշվապահական հաշվառման հաշիվներում պետք է գրանցվեն ժամանակին, որպեսզի արտացոլվեն այն հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում, որին դրանք վերաբերվում են:

2.6 Ֆինանսական հաշվետվություններում ներկայացվող տեղեկատվությունը պետք է լինի՝

ա) տեղին՝ օգտագործողների կողմից որոշումներ ընդունելու համար,

բ) արժանահավատ՝ ճշմարիտ ներկայացնի Բանկի գործունեության արդյունքները և ֆինանսական վիճակը, արտացոլի ոչ միայն իրադարձությունների և գործառնությունների իրավական ձևը, այլև տնտեսական բովանդակությունը, չեզոք լինի և ուղղված չլինի օգտագործողների առանձին խմբերին, հաշվենկատ և ամբողջական լինի բոլոր էական դրսևորումներում:

	Հաշվապահական հաշվառման վարման կարգ	Կոդ 01.02.3	Խմբագրություն՝ 1.1
		Հաստատված է Բանկի Խորհրդի 08.09.2015թ. որոշմամբ	

ԳԼՈՒԽ 3. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՇՎԱՅԻՆ ՊԼԱՆԸ

3.1 Հաշվային պլանը բաղկացած է վեց մասերից՝ ակտիվներ, պարտավորություններ, կապիտալ, եկամուտներ, ծախսեր և հետհաշվեկշռային հաշիվներ:

3.1.1 ակտիվը՝ Բանկի կողմից վերահսկվող միջոց է, իրականացված գործառնությունների արդյունք, որից ակնկալվում է Բանկի ապագա տնտեսական օգուտների ներհոսք,

3.1.2 պարտավորությունը՝ Բանկի պարտկանությունն է, իրականացված գործառնությունների արդյունք, որի իրականացումը կհանգեցնի Բանկի միջոցների արտահոսքի,

3.1.3 Կապիտալը՝ ակտիվներն են՝ պարտավորությունները հանելուց հետո,

3.1.4 եկամուտը՝ հաշվետու ժամանակաշրջանում տնտեսական օգուտների ավելացումն է, որն ակտիվների ներհոսքի/աճի և պարտավորությունների նվազեցման արդյունք է և հանգեցնում է կապիտալի աճի,

3.1.5 ծախսը՝ հաշվետու ժամանակաշրջանում տնտեսական օգուտներին նվազումն է՝ ակտիվների արտահոսքի/նվազեցման կամ պարտավորությունների առաջացման/աճի արդյունքում և հանգեցնում է կապիտալի նվազեցման:

3.2 Հաշիվները խմբավորված (կողավորված) և բաժանված են երկնիշ բաժինների, բաժինները՝ եռանիշ ենթաբաժինների, ենթաբաժինները՝ առաջին կարգի հաշիվների, առաջին կարգի հաշիվները՝ երկրորդ կարգի հաշիվների:

3.3 Ակտիվները և պարտավորությունները խմբավորվել են՝

- գործառնությունների բնույթի (օրինակ՝ վարկեր, դեպոզիտներ, ներգրավված միջոցներ, թղթակցային հաշիվներ և այլն),


- ժամկետայնության (ցպահանջ և ժամկետային),

- ռեզիդենտության (ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ),

- կազմակերպարավական տեսակի (ֆիզիկական անձինք՝ ֆիզիկական անձինք և անհատ ձեռներեցներ, կազմակերպության աշխատակիցներ, այլ անձինք, կազմակերպության հետ կապված այլ անձինք, կազմակերպության հետ կապված անհատ ձեռնարկատերեր, առևտրային և ոչ առևտրային, պետական և ոչ պետական իրավաբանական անձինք, ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող պետական առևտրային կազմակերպություններ, ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող այլ առևտրային կազմակերպություններ, հիմնարկներ, պետական ոչ առևտրային կազմակերպություններ, այլ ոչ առևտրային կազմակերպություններ, կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող պետական առևտրային կազմակերպություններ, կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող այլ առևտրային կազմակերպություններ, կազմակերպության հետ կապված հիմնարկներ և ոչ առևտրային կազմակերպություններ, կազմակերպության հետ կապված պետական ոչ առևտրային կազմակերպություններ, կազմակերպության հետ կապված այլ ոչ առևտրային կազմակերպություններ):

3.4 Ֆինանսական ակտիվները տարանջատվել են՝ առևտրական նպատակներով պահվող, վաճառքի համար մատչելի և մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների:

3.5 Հաշվային պլանում հաշվառման հաշվեգրման մեթոդի կիրառման համար ակտիվներում և պարտավորություններում յուրաքանչյուր ենթաբաժնում ստացվելիք և վճարվելիք գումարների հաշվառման համար նախատեսված են հաշիվներ, որոնք անկախ վճարման փաստից թղթակցում են <եկամուտներ> և <ծախսեր> կարգերի համապատասխան հաշիվների հետ և այնուհետև փակվում են փաստացի վճարումը կատարվելուց հետո: Հաշվեգրված ստացվելիք տոկոսները պայմանագրով

	Հաշվապահական հաշվառման վարման կարգ	Կոդ 01.02.3	Խմբագրություն՝ 1.1
		Հաստատված է Բանկի Խորհրդի 08.09.2015թ. որոշմամբ	

նախատեսված ժամկետներում չստանալու դեպքում, ըստ ակտիվների դասակարգման ընթացակարգերի դասակարգվում են մայր գումարի դասին համապատասխան և ակտիվի անհուսալի դասակարգման դեպքում դուրս են գրվում հաշվեկշռից և հաշվառվում հետհաշվեկշռում, մարման դեպքում տրվում է վերականգնիչ ձևակերպում:

3.6 Հաճախորդների ռեզիդենտությունը որոշվում և հաշվառումը կատարվում է համաձայն գործող օրենսդրության:

3.7 Հաշվային պլանում հաճախորդները դասակարգված են հետևյալ խմբերի՝ ֆիզիկական, իրավաբանական անձինք, հիմնարկներ, ֆինանսական կազմակերպություններ (ֆիզիկական անձինք՝ ֆիզիկական անձինք և անհատ ձեռներեցներ, կազմակերպության աշխատակիցներ, այլ անձինք, կազմակերպության հետ կապված այլ անձինք, կազմակերպության հետ կապված անհատ ձեռնարկատերեր, առևտրային և ոչ առևտրային, պետական և ոչ պետական իրավաբանական անձինք, ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող պետական առևտրային կազմակերպություններ, ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող այլ առևտրային կազմակերպություններ, հիմնարկներ, պետական ոչ առևտրային կազմակերպություններ, այլ ոչ առևտրային կազմակերպություններ, կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող պետական առևտրային կազմակերպություններ, կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող այլ առևտրային կազմակերպություններ, կազմակերպության հետ կապված հիմնարկներ և ոչ առևտրային կազմակերպություններ, կազմակերպության հետ կապված պետական ոչ առևտրային կազմակերպություններ, կազմակերպության հետ կապված այլ ոչ առևտրային կազմակերպություններ):

3.7.1 Ֆիզիկական անձինք են՝

- քաղաքացիները (ֆիզիկական անձինք),
- ֆիզիկական անձ տնտեսվարող սուբյեկտները:

3.7.2 Ֆինանսական կազմակերպություններն են՝


- բանկերը.
- վարկային կազմակերպությունները,
- գրավատները,
- ապահովագրական ընկերությունները,
- արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի, արտարժույթի առուվաճառքի

գործունեություն իրականացնող անձինք,

- դրամական փոխանցումներ իրականացնող լիցենզավորված անձինք,
- ինվեստիցիոն ընկերություններ, ինվեստիցիոն հիմնադրամներ
- ինվեստիցիոն ծառայություններ մատուցող հիմնարկներ
- վճարահաշվարկային փաստաթղթերի քլիրինգային կենտրոններ
- քարտային վճարումների պրոցեսինգ իրականացնող, վճարային քարտեր թողարկող

կենտրոններ և ձեռնարկություններ:

3.8 Իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

	Հաշվապահական հաշվառման վարման կարգ	Կոդ 01.02.3	Խմբագրություն` 1.1
		Հաստատված է Բանկի Խորհրդի 08.09.2015թ. որոշմամբ	

3.9 Իրավաբանական անձ են տնտեսական ընկերակցություններն ու ընկերությունները, որոնց նկատմամբ նրանց հիմնադիրները չունեն պարտավորական իրավունքներ, պատկանում են հասարակական միավորումները, հիմնադրամները, իրավաբանական անձանց միությունները:

3.10 Իրավաբանական անձինք կարող են լինել շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպություններ:

3.10.1 Իրավաբանական անձանց խմբին են դասվում ինչպես առևտրային, այնպես էլ ոչ առևտրային բնույթ ունեցող՝

- բաժնետիրական ընկերությունները,
- սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները,
- արտադրական և սպառողական կոոպերատիվները,
- պետական կարգավիճակով ձեռնարկությունները,

3.11 օտարերկրյա և/կամ համատեղ ձեռնարկությունները, կազմակերպությունները: Հիմնարկ է համարվում կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար իրավաբանական անձի ստեղծած կազմակերպությունը, որը չունի իրավաբանական անձի կարգավիճակ և գործում է հիմնադիր անձի հաստատած կանոնադրության հիման վրա:

3.12 Հաշվային պլանի 1600-1652` <<Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառություններ> բաժիններում բացված են վարկերի, իսկ 1660,1661 բաժիններում՝ <Վարկերի և հնարավոր կորուստների ծածկման պահուստների> հաշիվները, որոնք ինչպես 1940 <Դեբիտորական պարտքերի և այլ հնարավոր կորուստների ծածկման պահուստ>, այնպես էլ 1530,1531 <Վարկերի և հնարավոր կորուստների պահուստ ֆինանսական կազմակերպությունների գծով> հաշիվները հաշվեկշռի ակտիվային մասում հաշվառվող կոնտրակտիվային հաշիվներ են: Այս հաշիվներով հաշվառումը տարվում է <<< տարածքում գործող բանկերի ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի> համաձայն:

3.13 Բանկի արտաքին և ներքին դեբիտորները և կրեդիտորները՝ ինչպես դրամով, այնպես էլ արտարժույթով, հաշվառվում են տարանջատված ձևով, առանձին հաշիվներում:


3.14 Ներքին դեբիտորների և կրեդիտորների թվին են դասվում Բանկի և իր մասնաճյուղերի, Բանկի և իր աշխատակիցների միջև ձևավորված գործունեության հետևանքները:

3.15 Արտաքին դեբիտորների և կրեդիտորների թվին են դասվում այն ակտիվներն ու պարտավորությունները, որոնք առաջանում են Բանկի և այլ կազմակերպությունների, ֆիզիկական անձանց և հիմնարկների միջև:

3.16 Ֆյուչերս, ֆորվարդ, օպցիոն և սվոպ հեջավորման ածանցյալ գործիքների հաշվառումը պայմանագրային գումարներով տարվում է Բանկի հետհաշվեկշռում, իսկ իրական արժեքով արտացոլվում են հաշվեկշռային հաշվառման մեջ:

3.17 Հեջավորումը ներառում է հեջավորման գործիքի և հեջավորման հողվածի իրական արժեքի կամ դրանց վերագրելի դրամական միջոցների հոսքերի փոփոխություններից համապատասխան եկամուտների հաշվառում:

3.18 Հեջավորման գործիքը հեջի հաշվապահական հաշվառման նպատակներով նախատեսված ածանցյալ գործիք է կամ սահմանափակ հանգամանքներում մեկ այլ ֆինանսական ակտիվ կամ պարտավորություն, որի իրական արժեքը կամ դրամական միջոցների հոսքերն,

	Հաշվապահական հաշվառման վարման կարգ	Կոդ 01.02.3	Խմբագրություն՝ 1.1
		Հաստատված է Բանկի Խորհրդի 08.09.2015թ. որոշմամբ	

ակնկալվում է, որ կփոխհատուցեն նախատեսված հեջավորված հողվածի իրական արժեքի կամ ապագա դրամական միջոցների հոսքերի փոփոխությունը:

3.19 Հեջավորման փոխհարաբերությունները լինում են երեք տիպի՝

- իրական արժեքի հեջ՝ ճանաչված ակտիվի կամ պարտավորության իրական արժեքի փոփոխություններին ենթարկվածության հեջ, որը վերաբերում է որոշակի ռիսկի և ազդեցություն կթողնի հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթի վրա,
- դրամական միջոցների հոսքերի հեջ՝ դրամական միջոցների հոսքերի տատանումներին ենթարկվածության հեջ,
- արտերկրյա միավորում զուտ ներդրման հեջ:

3.20 Հեջավորման հողվածն ակտիվ է, պարտավորություն, կայուն պարտավորություն կամ կանխատեսված ապագա գործարք, որը Բանկին ենթարկում է իրական արժեքի փոփոխությունների կամ դրամական միջոցների ապագա հոսքերի փոփոխությունների ռիսկին:

3.21 Եթե հեջավորման հողվածը ոչ ֆինանսական ակտիվ է կամ պարտավորություն, այն պետք է նախատեսվի որպես հեջավորված հողված՝

- արտարժույթային ռիսկերի համար,
- որպես մեկ ամբողջություն բոլոր ռիսկերի համար, քանի որ դժվար է առանձնացնել և չափել դրամական միջոցների հոսքերի կամ իրական արժեքի փոփոխությունների համապատասխան մասը, որը վերագրելի է արտարժույթային ռիսկերից տարբեր այլ յուրահատուկ ռիսկերին:

3.22 Ածանցյալ գործիքը տիրապետողից կամ դուրս գրողից չի պահանջում պայմանագրի սկզբին ներդնել կամ ստանալ այդ պայմանական մեծությունը, որի գծով վերջնահաշվարկը կատարվում է ապագա որևէ ամսաթվին: Այլ դեպքում ածանցյալ գործիքը կարող է պահանջել ֆիքսված վճարում՝ որպես որևէ ապագա դեպքի արդյունք, որը կապված չէ որևէ պայմանական մեծության հետ: Ածանցյալ գործիքները առաջացնում են իրավունքներ և պարտավորություններ, որոնք հանգեցնում են ֆինանսական գործիքներում պարունակվող մեկ կամ մի քանի ֆինանսական ռիսկերի՝ ֆինանսական գործիքի մասնակից կողմերի միջև փոխանցման:


3.23 Պայմանագիրը կնքելու պահին ածանցյալ ֆինանսական գործիքները կողմերից մեկին տալիս են մյուս կողմի հետ պոտենցյալ նպաստավոր պայմաններով ֆինանսական ակտիվներ փոխանակելու պայմանագրային իրավունք կամ մյուս կողմի հետ պոտենցիալ ոչ նպաստավոր պայմաններով ֆինանսական ակտիվներ փոխանակելու պայմանագրային պարտավորություն:

3.24 Ֆյուչերս պայմանագիրն արժեթուղթ է, որով մի կողմը պարտավորվում է (սովորաբար որոշակի գրավի դիմաց) սահմանված քանակով, հաստատագրված գներով և ժամկետներում մյուս կողմից ձեռք բերել կամ նրան վաճառել որևէ ակտիվ:

3.25 Ֆորվարդային պայմանագիրն արժեթուղթ է, որով մի կողմը պարտավորվում է (սովորաբար որոշակի գրավի դիմաց) սահմանված ժամկետներում, մյուս կողմից գործարքի կնքման պահին շուկայական ձևավորված գնով ձեռք բերել կամ նրան վաճառել որևէ ակտիվ:

3.26 Օպցիոն պայմանագիրն արժեթուղթ է, որով մի կողմը (սովորաբար որոշակի գրավի դիմաց) մյուս կողմին իրավունք է տալիս սահմանված ժամկետով և իր անունից ձեռք բերել կամ վաճառել որոշակի քանակի ակտիվ, այդ թվում ֆյուչերսային կամ ֆորվարդային պայմանագիր:

3.27 Բանկի հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման, բարելավման վրա կատարված ներդրումները, ինչպես նաև կուտակված մաշվածությունն ու շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների արժեգրկումը հաշվառվում են 21 և 22 բաժինների համապատասխան հաշիվներում: Վերոհիշյալ բաժիններում հաշվառվող ակտիվների կամ հիմնական միջոցների

	Հաշվապահական հաշվառման վարման կարգ	Կոդ 01.02.3	Խմբագրություն` 1.1
		Հաստատված է Բանկի Խորհրդի 08.09.2015թ. որոշմամբ	

արժեքները, ինչպես նաև նրանց վրա կատարված ծախսագրումներն ու բարելավումները հաշվառվում են համաձայն ՀՀՄՍ 16 <<Հիմնական միջոցներ> և ՀՀՄՍ 38 <Ոչ նյութական ակտիվներ> ստանդարտների:

3.28 Հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվները հաշվեկշռում հաշվառվում են իրենց սկզբնական արժեքով (ներառյալ հարկերը) խմբավորված՝ ըստ ամորտիզացիոն մասհանումների միասնական նորմաների: Նույնատիպ խմբավորումով հաշվառվում են հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների նկատմամբ հաշվարկված ամորտիզացիոն հատկացումները: Վերջիններս հաշվառվում են հաշվեկշռի ակտիվում բացասական նշանով, որով պակասեցվում է ակտիվների ընդհանուր հանրագումարը: Արտարժույթով ձեռք բերված հիմնական միջոցները հաշվառվում են ձեռք բերման օրվա միջին փոխարժեքներին համարժեք ՀՀ դրամով:

3.29 Հիմնական միջոցները նյութական ակտիվներ են, որոնք սեփականության իրավունքով պատկանում են Բանկին, առկա են Բանկում աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, ապրանքների իրացման և վարչական նպատակներով օգտագործելու համար, ենթակա են օգտագործման ավելի քան մեկ տարի ժամկետով, անկախ արժեքից, և օգտագործման ընթացքում պահպանում են իրենց բնահրային տեսքը և առանձնացվելի են այլ ակտիվներից:

3.30 Բոլոր հիմնական միջոցներն օգտագործման ընթացքում մաշվում են /բացառությամբ հողի/:

3.31 Մաշվող հիմնական միջոցներն իրենց հերթին բաժանվում են երկու մասի՝


- տվյալ պահին մաշվածություն հաշվարկվում է (շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցներ),
- տվյալ պահին մաշվածություն չի հաշվարկվում (շահագործման մեջ չգտնվող նոր ձեռք բերված հիմնական միջոցներ):

3.32 Վարչության նախագահի հրամանի հիման վրա կազմվում է հանձնաժողով համապատասխան մասնագետների ներգրավմամբ, որոնց եզրակացության հիման վրա Բանկի Վարչությունը որոշում է կայացնում այն հիմնական միջոցների վերաբերյալ, որոնք շահագործման ընթացքում վնասվել են և/կամ բարոյապես, ֆիզիկապես մաշվել:

3.33 Այն հիմնական միջոցները, որոնք պիտանի չեն հետագա օգտագործման համար, դուրս են գրվում հաշվեկշռից և օգտագործվում են որպես պահեստամասեր:

3.34 Բանկն իրավունք ունի գրոյական մնացորդով հիմնական միջոցները դուրս չգրել հաշվեկշռից, մինչև 3.32 կետում նշված հանձնաժողովի կողմից հիմնական միջոցի դուրս գրման վերաբերյալ համապատասխան եզրակացությունը:

3.35 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածությունը Բանկում հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Հաշվապահական հաշվառման վարման կարգ	Կոդ 01.02.3	Խմբագրություն՝ 1.1
		Հաստատված է Բանկի Խորհրդի 08.09.2015թ. որոշմամբ	

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Շենքեր	60	1.67
Կապի և հաղորդակցման միջոցներ	5	20
Համակարգչային տեխնիկա	5	20
Գույք և գրասենյակային սարքավորումներ	5	20
Փոխադրամիջոցներ	7	14.3
Բանկումատներ	10	10
Ոչ նյութական ակտիվներ	25	4
Այլ հիմնական միջոցներ	5	20
Վարձակալված շենքերի, շինությունների վրա կատարված կապիտալ ներդրումներ	50	2

3.36 Հիմնական միջոցների օգտակար ծառայության վերանայումը և վերագնահատումը կատարվում է համաձայն ՀՀՄՍ 16-ի:

3.37 Ամորտիզացիան հաշվարկվում է ամենամսյա հավասարաչափ հատկացումների մեթոդով, ակտիվների օգտակար ծառայության ամբողջ ընթացքում:

3.38 Բանկում շահագործումից դուրս հիմնական միջոցների հաշվառումը տարվում է հաշվային պլանի 2110, 2111, 2112 առաջին կարգի հաշիվներով՝ համաձայն համապատասխան ստանդարտների:

3.39 Բանկի կողմից ձեռք բերված տնտեսական գույքը և նյութերը, որոնք ունեն մինչև մեկ տարի օգտագործման ժամկետ և/կամ օգտագործման ընթացքում սպառվում են, հաշվառվում են 2500 առաջին կարգի հաշիվներում:

3.40 Մատակարարների ներկայացրած հաշվարկային փաստաթղթերում առանձնացված ԱԱՀ գումարները, յուրաքանչյուր ամսվա վերջում, ծախսագրվում են՝ համաձայն <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի, հաճախորդներից ստացված ԱԱՀ գումարների հետ հաշվանցելուց հետո, որից հետո ակտիվների գումարները մուտքագրվում են համապատասխան հաշիվներում՝ իրենց զուտ արժեքով:


3.41 Բանկի ներդրումներն այլ անձանց կանոնադրական հիմնադրամներում հաշվառվում են 20 բաժնի համապատասխան հաշիվներում:

3.42 Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝

3.42.1 բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող, այս ներդրումը սկզբնապես գրանցվում է ինքնարժեքով, ճշգրտվում է ձեռքբերումից հետո ներդրման օբյեկտի զուտ ակտիվներում ներդրողի բաժնեմասի փոփոխությունների չափով: Ներդրման օբյեկտից ստացվող շահաբաժինը նվազեցնում է ներդրման հաշվեկշռային արժեքը:

3.42.2 ինքնարժեքի մեթոդով հաշվառվող, այս ներդրումը գրանցվում է ինքնարժեքով: Ֆինանսական հաշվետվությունում ներդրումներից եկամուտներն արտացոլվում են միայն այն չափով, որքանով որ ներդրողը բաժին է ստանում ներդրման օբյեկտի՝ ձեռքբերման ամսաթվից հետո կուտակված չբաշխված զուտ շահույթի բաշխումից: Դրանից ավելի բաշխումը դիտվում է որպես ներդրման փոխհատուցում և գրանցվում որպես ներդրման ինքնարժեքի նվազեցում:

3.42.3 համամասնական համախմբման մեթոդով հաշվառվող՝ համատեղ վերահսկվող միավորի ակտիվներից, պարտավորություններից, եկամուտներից և ծախսերից յուրաքանչյուրի մեջ ձեռնարկողի բաժինը միավորվում է ձեռնարկողի ֆինանսական հաշվետվությունների համանման հոդվածների հետ՝

	Հաշվապահական հաշվառման վարման կարգ	Կոդ 01.02.3	Խմբագրություն՝ 1.1
		Հաստատված է Բանկի Խորհրդի 08.09.2015թ. որոշմամբ	

տող առ տող, կամ ձեռնարկողի ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում է առանձին տողով:

3.43 Հաշվեկշռի 12՝ <Շահույթով կամ վնասով վերաչափվող ֆինանսական ակտիվներ>, 13՝ <Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ>, 14՝ <Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ> բաժիններում հաշվառվում են ՀՀ պետական և ոչ պետական, այլ երկրների պետական և ոչ պետական արժեթղթերը, ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերը:

3.44 12 և 13 բաժիններում ընդգրկված ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ գրանցվում են ձեռք բերման արժեքով, որից հետո վերագնահատվում են իրական արժեքով:

3.45 14 բաժնում ընդգրկված ակտիվների սկզբնական գրանցումը կատարվում է ձեռքբերման արժեքով (անվանական արժեքին գումարած հավելվածար կամ հանած զեղչատոկոս) հետո ամորտիզացված արժեքով: Սկզբնական գրանցման ժամանակ մինչև ձեռք բերումը ակտիվի գծով կուտակված և չվճարված տոկոսների գումարով Բանկը դեբետագրում է ստացվելիք տոկոսների հաշիվները: Ձեղչատոկոսի գումարը դուրս է գրվում եկամուտների հաշիվին, իսկ հավելվածարինը՝ եկամուտների հաշիվից՝ օգտագործելով էֆեկտիվ տոկոսադրույքի մեթոդը: Եթե Բանկը այս կարգի ակտիվները վերադասակարգում է որպես առևտրական նպատակներով պահվող կամ վաճառքի համար մատչելի ակտիվներ, ապա գրանցումը կատարվում է դրանց՝ տվյալ օրվա իրական գնի համաձայն: Այն դեպքում, երբ ներդրումները դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվող ակտիվներ, ապա գնման ժամանակ առաջացած շահույթը կամ վնասը ձևակերպվում է եկամուտների կամ ծախսերի համապատասխան հաշիվներով: Եթե ակտիվը վերադասակարգվում է որպես վաճառքի համար, ապա վերագնահատման արդյունքը՝ որպես իրական արժեքի և հաշվեկշռային արժեքի միջև եղած տարբերություն գրանցվում է հաշվեկշռի 52102 <Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթ/վնաս> հաշվում:

3.46 Հաշվեկշռում առկա են միայն ակտիվային կամ միայն պասիվային հաշիվներ: Ակտիվապասիվային հաշիվներ Բանկի հաշվեկշռում չեն հաշվառվում: Հաշիվների օրվա վերջին մնացորդներից ծրագրային եղանակով դուրս է բերվում մեկ մնացորդ, կամ ակտիվային կամ պասիվային՝ ըստ պատկանելիության:


3.47 Բանկի ֆինանսական ակտիվները և պարտավորությունները կարող են արտահայտվել ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով, իսկ ֆինանսական հաշվետվություններում դրանք արտացոլվում են ՀՀ ԿԲ կողմից սահմանված օրվա միջին փոխարժեքներով՝ արտահայտված ՀՀ դրամով:

3.48 Արտարժույթը դասակարգվում է 2 խմբի՝

- ազատ փոխարկելի,
- սահմանափակ փոխարկելի:

3.49 Եվրո զամբյուղի մեջ մտնող՝ գերմանական մարկը, ֆրանսիական ֆրանկը, հոլանդական գուլդենը, իտալական լիրան, բելգիական ֆրանկը, իսպանական պեսետան, ավստրիական շիլինգը, պորտուգալական էսկուդոն, ֆիննական մարկը, հունական դրահման, շվեյցարական ֆրանկը, կանադական դոլարը, շվեդական կրոնը, ավստրալիական դոլարը, SDR-ի զամբյուղի մեջ մտնող ԱՄՆ դոլարը, ճապոնական իենը, անգլիական ֆունտ ստեռլինգը դասվում են ազատ փոխարկելի արտարժույթների թվին:

3.50 Մնացած բոլոր արտարժույթները համարվում են սահմանափակ փոխարկելի:

	Հաշվապահական հաշվառման վարման կարգ	Կոդ 01.02.3	Խմբագրություն՝ 1.1
		Հաստատված է Բանկի Խորհրդի 08.09.2015թ. որոշմամբ	

ԳԼՈՒԽ 4. ՀԱՐԿԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Բանկի կողմից իր հարկային պարտավորությունների հաշվարկն ու հարկումն իրականացվում է հետաձգված հարկային ակտիվների կամ պարտավորությունների մեթոդով:

4.2 Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները, որոնք հանդիսանում են եկամուտների և ծախսերի գրանցման հաշվապահական և հարկային մոտեցումների ժամանակային տարբերության արդյունք, ճանաչվում են այն դեպքում, երբ գոյություն ունի հավանականություն, որ դրանք ապագայում կվճարվեն կամ կփոխհատուցվեն:

ԳԼՈՒԽ 5. ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունն ապահովելու նպատակով Բանկն իրականացվում են ակտիվների և պարտավորությունների գույքագրում, համաձայն՝ «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կենտրոնական բանկի կողմից 13.07.01թ-ին հաստատված «Առևտրային բանկերում ակտիվների և պարտավորությունների գույքագրման կարգի»:

5.2 Գույքագրումներ իրականացվում են նաև նյութապատասխանատու անձանց ժամանակավոր անաշխատունակության և մեկ այլ անձով փոխարինելու դեպքերում:

5.3 Գույքագրման ենթակա են Բանկի ակտիվները, պարտավորությունները, փաստաթղթերը, ի պահ ընդունված և պահպանվող նյութական և այլ արժեքները:

5.4 Գույքագրման աշխատանքներն իրականացվում են Վարչության նախագահի կարգադրությամբ սահմանված կարգով և ժամկետներում, ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են Բանկի աշխատակիցներ:

5.5 Գույքագրման հանձնաժողովի կազմը չպետք է պակաս լինի 4 անձից, իսկ տարեկան ֆինանսական հաշվետվությունների կազմմանը նախորդող գույքագրման ժամանակ՝ 6 անձից:

5.6 Իրականացվող գույքագրման աշխատանքները ոչ մի կերպ չպետք է խոչընդոտեն Բանկի և առանձին աշխատակիցների բնականոն գործունեությանը: Նման խնդրի առաջացման դեպքում՝ հատուկ կարգադրությամբ, գույքագրման աշխատանքները կարող են տեղափոխվել ոչ աշխատանքային ժամերին:


5.7 Գույքագրման ժամկետ սահմանվում է առավելագույնս 5 բանկային օր, բացառությամբ ամենամյա գույքագրումների, որոնց առավելագույն ժամկետն է մեկ ամիս:

5.8 Տարեկան գույքագրումների հանձնաժողովը ղեկավարում է Բանկի ղեկավարը կամ նրա տեղակալը:

5.9 Գույքագրումների արդյունքները պատշաճ կերպով փաստաթղթավորվում են, արձանագրվում են հայտնաբերված պակասորդները և ավելցուկները: Տարբերությունների առաջացման դեպքում նյութական պատասխանատու անձանց կողմից կազմվում է բացատրագիր՝ հայտնաբերված տարբերությունների առաջացման պատճառների մատնանշմամբ: Կորուստների առաջացման դեպքում մեղավոր անձինք պարտավոր են փոխհատուցել դրանք:

5.10 Հայտնաբերված տարբերությունները, ինչպես նաև դրանց հատուցումները ձևակերպվում են Բանկի հաշվեկշռում՝ հաշվառման գործող ստանդարտներին համաձայն:

5.11 Գույքագրման փաստաթղթերը պահվում են Բանկի հաշվապահական հաշվառման փաստաթղթերում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներով:


	Հաշվապահական հաշվառման վարման կարգ	Կոդ 01.02.3	Խմբագրություն՝ 1.1
		Հաստատված է Բանկի Խորհրդի 08.09.2015թ. որոշմամբ	

ԳԼՈՒԽ 6. ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԸ

- 6.1 Բանկում աշխատավարձը հաշվարկվում և վճարվում է ամսական երկու անգամ՝ յուրաքանչյուր ամսվա 15-ին և ամսվա վերջին աշխատանքային օրը:
- 6.2 Արձակուրդային գումարների հաշվարկման համար հիմք է հանդիսանում աշխատակցի դիմումի հիման վրա Բանկի Վարչության նախագահի՝ Հաշվապահական հաշվառման և ամփոփ հաշվետվությունների դեպարտամենտին տրված հրամանը:
- 6.3 Արձակուրդային գումարը վճարվում է ՀՀ օրենքով սահմանված կարգով:
- 6.4 Վճարման ենթակա գումարը փոխանցվում է աշխատակցի քարտային հաշվին՝ արձակուրդին նախորդող 3 գործառնական օրվա ընթացքում:
- 6.5 Բացառիկ դեպքերում, ելնելով աշխատանքային անհրաժեշտությունից, Բանկի Վարչության նախագահի հրամանի հիման վրա աշխատակիցը հետ է կանչվում՝ վարձատրվելով աշխատանքի ներկայանալու օրվանից, հետագայում իրավունք ունենալով օգտագործել չօգտագործված արձակուրդային օրերը:
- 6.6 Բանկի Վարչության նախագահի հրամանի հիման վրա ոչ աշխատանքային և տոն օրերին աշխատելու համար աշխատակիցները վարձատրվում են համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի:

ԳԼՈՒԽ 7. ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 7.1 Բանկում գործառնական օրվա փաստաթղթավորումը և արխիվացումը կատարվում է Բանկի ներքին իրավական ակտերին համապատասխան, անհրաժեշտ է ապահովել գործառնությունների արխիվացումն ինչպես թղթային, այնպես էլ մագնիսական կրիչների վրա:
- 7.2 Արխիվացված տեղեկատվության պահպանման նվազագույն ժամկետը 5 տարի է:
- 7.3 Գործառնական օրվա թղթային և էլեկտրոնային փաստաթղթերը հաստատվում են (նաև էլեկտրոնային ստորագրություններով) համապատասխան ղեկավար անձանց ստորագրություններով:
- 7.4 Խարդախությունների ռիսկի նվազեցման նպատակով առանձին փաստաթղթով՝ Բանկի հաշվապահական հաշվառման ստորաբաժանման ղեկավարի կողմից ստորագրությամբ հաստատվում և արխիվացվում են նաև գործառնական օրվա ընթացքում չհաստատված և/կամ հեռացված գործարքները:
- 7.5 Բանկի ֆինանսատնտեսական գործառնությունների ֆինանսական արդյունքներն արտահայտվում են հաշվային պլանի 6000 և 7000 կարգի հաշիվներում: Դրանց հաշվառումը կատարվում է տարվա ընթացքում աճողական կարգով՝ գործառնությունների արդյունքների ամենօրյա ձևակերպումների միջոցով:
 - 7.5.1 Տոկոսային եկամուտը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում ճանաչվում է հաշվեգրման մեթոդով: Կոմիսիոն և այլ վճարումները եկամուտ են ճանաչվում գործարքի փաստացի իրականացման ժամանակ:
 - 7.5.2 Տոկոսային ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով:
 - 7.5.3 Ոչ տոկոսային ծախսերը ճանաչվում են ինչպես հաշվեգրման, այնպես էլ դրամարկղային մեթոդներով:
 - 7.5.4 Արժեթղթերի զեղչատոկոսները որպես տոկոսային եկամուտ էֆեկտիվ տոկոսադրույքի մեթոդով ամորտիզացվում են արժեթղթերի մարման ժամանակահատվածի ընթացքում:
 - 7.6 Բանկի շահույթը և (կամ) վնասը ձևավորվում է ինչպես օրական, այնպես էլ տարեսկզբից աճողական կարգով: Տարվա վերջին աշխատանքային օրը մասնաճյուղերում փակվում են եկամուտները

	Հաշվապահական հաշվառման վարման կարգ	Կոդ 01.02.3	Խմբագրություն` 1.1
		Հաստատված է Բանկի Խորհրդի 08.09.2015թ. որոշմամբ	

և ծախսերը՝ հաշվային պլանում դրա համար նախատեսված հաշիվների միջոցով, դրանք տեղափոխելով Գլխամասային գրասենյակ:

7.7 Ֆինանսական հաշվետվությունները Բանկի կողմից կազմվում և ներկայացվում են համաձայն ՀՀՀՀՍ 30-ի՝ «Բանկերի և նմանատիպ ֆինանսական հաստատությունների ֆինանսական հաշվետվություններում բացահայտումներ»-ի:

7.8 Բանկը հրապարակվող ֆինանսական հաշվետվությունները կազմում է համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների: Հրապարակվող ֆինանսական հաշվետվությունները հետևյալն են.

- 1) <Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն>,
- 2) <Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն>,
- 3) <Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն>,
- 4) <Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն>,
- 5) <Միջանկյալ հաշվետվություն Ֆինանսական արդյունքների մասին (ձև թիվ 6ա)>,
- 6) <Միջանկյալ հաշվետվություն այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին (ձև թիվ 7)>,
- 7) <Միջանկյալ հաշվետվություն ֆինանսական վիճակի մասին>,
- 8) <Միջանկյալ հաշվետվություն սեփական կապիտալում փոփոխությունների մասին (ձև թիվ 8)>,
- 9) <Միջանկյալ հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ (ձև թիվ 9)>: